

ԿԱՆԹԵՂ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

GANTEGH

BULLETIN DU DIMANCHE
DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE
ST-GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MONTRÉAL



GANTEGH

SUNDAY BULLETIN OF
ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

WWW.SAINTGREGORY.CA

ԿԻՐԱԿԻ, 15 Ապրիլ 2018

ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ (ԿԱՆԱԶ)

ԿԻՐԱԿԻ / ԹԻՒ 54

SUNDAY, April 15, 2018

GREEN SUNDAY / NO. 54

TODAY'S BIBLE READINGS

Peter 1 2:1-10 / John

2:23,3-12 /



Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ՀԱՅԱՐԻ ԲՅՆՅ. ԹԱՆԱՇԵԱՆ

Celebrant:

REV. FR. HAYARI TANASHIAN

Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan, Dn. Vahan Shakaryan, Dn. Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan

Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjian

Choirmaster: Mr. Murat Demirdogen

Organist: Mr. Karen Manucharyan

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

secretary@saintgregory.ca | www.saintgregory.ca

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ Ա. ՆԱՄԱԿԵՆ 2.1-10

1Ուրեմն, թօթափելով ամեն չարամտութիւն եւ ամեն նենգութիւն, կեղծաւորութիւնները, նախանձներն ու բոլոր բամբասանքները, **2**նորածին երախաներու պէս տենչացէ՛ք Աստուծոյ խօսքին անխարդախ կաթին, որպէսզի աճիք անով (մինչեւ փրկութիւնը), **3**եթէ համտեսած էք Տէրոջ քաղցր ըլլալը:

4Մօտեցէ՛ք անոր՝ ապրող քարին, որ արդարեւ մարդոցմէ մերժուած է, բայց Աստուծմէ ընտրուած ու պատուական է: **5**Դո՛ւք ալ՝ ապրող քարերու պէս՝ կը շինուիք իբր հոգեւոր տաճար մը, սուրբ քահանայութիւն մը, որպէսզի մատուցանէք հոգեւոր զոհեր, Աստուծոյ ընդունելի՝ Յիսուս Զրիստոսի միջոցով:

6Որովհետեւ Գիրքին մէջ ալ կայ. «Ահա՛ Սիոնի մէջ կը դնեմ ծայրագոյն անկիւնաքար մը, ընտիր ու պատուական, եւ ո՛վ որ հաւատայ անոր՝ բնա՛ւ ամօթահար պիտի չըլլայ»:

7Ուրեմն ձեզի՝ որ կը հաւատաք՝ պատուական է ան, իսկ անհնազանդներուն համար՝ «այն քարը՝ որ կառուցանողները մերժեցին, անիկա՛ եղաւ անկիւնաքարը,

8ու սայթաքումի քար եւ գայթակողութեան ժայռ» անոնց՝ որ խօսքին անհնազանդ ըլլալով կը գայթին, որուն համար ալ որոշուած էին:

9Բայց դուք ընտրուած ցեղ մըն էք, թագաւորական քահանայութիւն մը, սուրբ ազգ մը, սեփական ժողովուրդ մը, որպէսզի հռչակէք առաքինութիւնները անո՛ր՝ որ կանչեց ձեզ խաւարէն իր սքանչելի լոյսին: **10**Ժամանակին ժողովուրդ չէիք, բայց հիմա Աստուծոյ ժողովուրդն էք. առանց ողորմութեան էիք, բայց հիմա ողորմութիւն գտաք:

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՅԱՆՆԵՍԻ 2.23,3-12

23 Երբ Չատիկի տօնին ատենը Երուսաղէմ էր, շատ մարդիկ հաւատացին անոր անունին՝ տեսնելով անոր ըրած նշանները: **24** Բայց ինք՝ Յիսուս՝ չէր հաւատար անոնց, որովհետեւ կը ճանչնար ամեն մարդ. **25** պէտք չունէր՝ որ

մէկը ուրիշ մարդու մասին վկայեր իրեն, քանի որ ինք գիտեր թէ ի՛նչ կայ մարդուն մէջ:

2.3 Յիսուս պատասխանեց անոր. «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ քեզի. “Եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ թագաւորութիւնը”»: **4** Նիկողեմոս ըսաւ անոր. «Ի՛նչպէս կրնայ ծնիլ մարդ մը՝ որ ծերացած է: Կարելի՞ է, որ երկրորդ անգամ մտնէ իր մօր որովայնը եւ ծնի»:

5 Յիսուս պատասխանեց. «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ քեզի. “Եթէ մէկը ջուրէն ու Յոգիէն չծնի՝ չի կրնար մտնել Աստուծոյ թագաւորութիւնը”»: **6** Մարմինէն ծնածը՝ մարմին է, եւ Յոգիէն ծնածը՝ հոգի է:

7 Դուն մի՛ գարմանար որ ըսի քեզի. “Դուք պետք է վերստին ծնիք”»: **8** Հոգը կը փչէ ո՛ւր որ ուզէ. կը լսես անոր ձայնը, բայց չես գիտեր ուրկէ՛ կու գայ, կամ ո՛ւր կ’երթայ: Ո՛վ որ Յոգիէն կը ծնի՝ ա՛յսպէս է»:

9 Նիկողեմոս ըսաւ անոր. «Ի՛նչպէս կրնայ ըլլալ ատիկա»: **10** Յիսուս պատասխանեց անոր. «Դուն Իսրայելի մէջ վարդապետ մըն ես, ու չե՛ս գիտեր այս բաները: **11** Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ քեզի թէ ինչ որ գիտենք՝ կը խօսինք, եւ ինչ որ տեսանք՝ կը վկայենք, ու չէք ընդունիր մեր վկայութիւնը: **12** Եթէ երկրային բաներու մասին խօսեցայ ձեզի եւ չէք հաւատար, ի՛նչպէս պիտի հաւատաք՝ եթէ երկնային բաներու մասին խօսիմ ձեզի:


Peter 1 2.1-10

1 Wherefore laying aside all malice, and all guile, and hypocrisies, and envies, and all evil speaking, **2** As newborn babes, desire the sincere milk of the word, that ye may grow thereby: **3** If so be ye have tasted that the Lord is gracious. **4** To whom coming, as unto a living stone, disallowed indeed of men, but chosen of God, and precious, **5** Ye also, as lively stones, are built up a spiritual house, an holy priesthood, to offer up spiritual sacrifices, acceptable to God by Jesus Christ. **6** Wherefore also it is contained in the scripture, Behold, I lay in Sion a chief corner stone, elect, precious: and he that believeth on him shall not be confounded. **7** Unto you therefore which believe he is precious: but unto them which be disobedient, the stone which the builders disallowed, the same is made the head of the corner, **8** And a stone of stumbling, and a rock of offence, even to them which stumble at the word, being disobedient: whereunto also they were appointed. **9** But ye are a chosen generation, a royal priesthood, an holy nation, a peculiar people; that ye should shew forth the praises of him who hath called you out of darkness into his marvellous light; **10** Which in time past were not a people, but are now the people of God: which had not obtained mercy, but now have obtained mercy.

John 2.23,3-12

23 Now when he was in Jerusalem at the passover, in the feast day, many believed in his name, when they saw the miracles which he did. **24** But Jesus did not commit himself unto them, because he knew all men, **25** And needed not that any should testify of man: for he knew what was in man.

3 There was a man of the Pharisees, named Nicodemus, a ruler of the Jews: **2** The same came to Jesus by night, and said unto him, Rabbi, we know that thou art a teacher come from God: for no man can do these miracles that thou doest, except God be with him. **3** Jesus answered and said unto him, Verily, verily, I say unto thee, Except a man be born again, he cannot see the kingdom of God. **4** Nicodemus saith unto him, How can a man be born when he is old? can he enter the second time into his mother's womb, and be born? **5** Jesus answered, Verily, verily, I say unto thee, Except a man be born of water and of the Spirit, he cannot enter into the kingdom of God. **6** That which is born of the flesh is flesh; and that which is born of the Spirit is spirit. **7** Marvel not that I said unto thee, Ye must be born again. **8** The wind bloweth where it listeth, and thou hearest the sound thereof, but canst not tell whence it cometh, and whither it goeth: so is every one that is born of the Spirit. **9** Nicodemus answered and said unto him, How can these things be? **10** Jesus answered and said unto him, Art thou a master of Israel, and knowest not these things? **11** Verily, verily, I say unto thee, We speak that we do know, and testify that we have seen; and ye receive not our witness. **12** If I have told you earthly things, and ye believe not, how shall ye believe, if I tell you of heavenly things.



ՏՕՆԵՐ

15 Ապրիլ 2018

Աշխարհամատրան (Կանաչ) Կիրակի

Այսպես կը կոչուի Ս. Չատկին յաջորդող երկրորդ Կիրակին: «Աշխարհամատուռ»-ը կազմուած է աշխարհ եւ մատուռ բառերէն եւ կը նշանակէ աշխարհի առաջին մատուռը՝ Երուսաղէմի եկեղեցին՝ հիմնուած

առաքեալներու կողմէ: Աշխարհամատուռ բառին բառարանները զանազան իմաստներ կու տան. «պազիլիքայ», այսինքն՝ արքունի տաճար, երեւելի մատուռ կամ աւագ եկեղեցի: Մատուռը Յունարէն բառ է, որ կը նշանակէ Մարտիրոսանոց: Առաքելական շրջանին Երուսաղէմի մէջ պատրաստուեցաւ մարտիրոսներու եկեղեցին եւ կոչուեցաւ Աշխարհամատուռ: Հետագային մարտիրոսներու գերեզմանին վրայ, անոնց յիշատակին կառուցուեցան մատուռներ եւ եկեղեցիներ:

Աշխարհամատրան Կիրակին եկեղեցին կը նշէ Յիսուս Քրիստոսի հաստատած ընդհանրական, մէկ միասնական եկեղեցւոյ տօնը:

Այս Կիրակի երգուող, Հարցէ շարականը եկեղեցւոյ նուիրուած գովերգութիւններ են եւ եկեղեցւոյ մէջ Աստուծոյ օրհնելու հրաւերներ: Նոյն միտքը կ'արտայայտուի յաջորդող, Ողորմեայ եւ Տէր յերկնիցէ շարականներուն մէջ:

Աշխարհամատրան Կիրակիին նպատակն է վերյիշել համաքրիստոնէական հնագոյն մատուռի՝ քրիստոնէական եկեղեցւոյ սկզբնաւորութիւնը, որ հիմնուեցաւ վերնատան կից, առաքեալներուն կողմէ: Մեր Տէր Յիսուս Քրիստոսի համբարձումէն յետոյ վերնատունը դարձաւ Ս. Աստուածածնի, առաքեալներու աղօթքի ու հանդիպումներու մշտական հաւաքատեղին, այսինքն՝ քրիստոնէական առաջին եկեղեցին:

Վերնատան մէջ Յիսուս կատարեց Վերջին Ընթրիքը, որուն ընթացքին հաստատեց Հաղորդութեան Ս. Խորհուրդը: Այստեղ էր, որ Ս. Հոգին իջաւ առաքեալներուն վրայ: Այստեղ էր, որ առաջին քրիստոնէաները, կը յարատեւէին առաքեալներու ուսուցման, հաղորդութեան, հացի բեկման ու աղօթքներուն մէջ: (Գործք Առաքելոց 2:42): Այսինքն՝ամեն օր կը հաւաքուէին առաքեալներու ուսուցումը լսելու, իրենց հասարակաց կեանքը ապրելու, Ս. Հաղորդութեան



խորհուրդը կատարելու եւ աղօթելու համար:
Նոյն վերնատան մէջ Յիսուս Յարութենէն
յետոյ երկու անգամ երեւցաւ իր
աշակերտներուն:

Այսպիսով, Յովհաննէս Մարկոսի տան
վերնայարկը որպէս նախատիպ ծառայեց
քրիստոնէայ առաջին եկեղեցւոյ համար
(Գործք Առաքելոց 12:12):

Այս տօնը յատուկ է միայն Հայ եկեղեցւոյ:

Աշխարհամատրան Կիրակին կը կոչուի
նաեւ՝ Կանաչ Կիրակի: Սա տօնին

ժողովրդական անուանումն է, կապուած բնութեան, գարնանային գարթօնքին
հետ:

Կանաչ անունը վերցուած է մայր բնութեան պարգեւած երեւոյթներէն եւ կը
մարմնաւորէ Հինանց այս օրերուն տիրապետող համատարած, զմրուխտ
խոտածածկոյթը, որուն միջոցաւ կը պատմուճանուի բնութիւնը Գարնան այս
օրերուն: Այս անուանակոչումը, ժողովրդական բարեպաշտութեան արդիւնք
ըլլալով հանդերձ, միեւնույն ժամանակ զուրկ չէ կրօնական երանգէն:

Աւելի շատ Գարունն է, որ մեզ կ'առաջնորդէ դէպի բնութեան Օրէնսդիրը՝
Արարիչը: Բնութիւնը ինքն իրեն չի կրնար ստեղծել, ճիշտ այնպէս, ինչպէս մեզմէ
հւրաքանչիւրը իր ցանկութեամբ չի կրնար աշխարհ գալ: Կայ անոնց
սկզբնապատճառ Ստեղծիչը: Ծառերն ու ծաղիկները չեն, որ կը սահմանեն իրենց
օրէնքները, ինչպէս մեզմէ ամեն մէկը ինք չէ, որ կը որոշէ իր սեռը կամ մասնաւոր
յատկութիւնները: Գարունն է, որ ամենէն ավելի կ'առաջնորդէ մեզ դէպի կեանքի
գիտակցութիւնը եւ կ'աղաղակէ կեանքի յաւերժութիւնը, յարութիւնը եւ մշտական
յաղթանակը:

Կանաչ Կիրակին մեզ կը յիշեցնէ էյանքի յարութիւնը եւ անոր յաւիտենական
գոյութիւնը: Հինունքի հիմնական գաղափարը նաեւ՝ այդ է:

Կանաչ ըսելով նկատի կ'առնուի ծաղկած ու կանաչած Եկեղեցին: Կանաչը կը
խորհրդանշէ նաեւ՝ Եկեղեցւոյ մշտականութիւնը եւ անմահութիւնը: Կանաչ
Կիրակին կը նմանցնեն բնութեան մէջ ծաղկող, ծլարձակող եւ աճող կեանքին, որ
կենդանութիւն ու թարմութիւն կու տայ աշխարհին և մարդկութեան:

Աշխարհամատուռն ալ որպէս Քրիստոսի ցանած սերմի առաջին կանաչ ծիլը,
աճեցաւ, ծլարձակեց, բազմացաւ եւ դարձաւ աշխարհին մէջ տարածուած
եկեղեցին:



Կանաչ Կիրակին մեզ կը յիշեցնէ, որ կեանքը Յիսուս Քրիստոսով մշտադալար է, ինչպէս բնութիւնն է մշտնջենական, նոյնպէս եւ կեանքը յարութեան յոյսով մշտնջենական է ու յարատեւ:

Կանաչ Կիրակիին տօնախմբութիւնները Չատկական տօնական հանդիսութիւններուն շարունակութիւն են:

Այս տօնը կը նշուէր մասնաւորապէս ուխտավայրերուն մէջ, ուր կը հաւաքուէին ուխտաւորներու հոծ բազմութիւն, մատաղներ եւ մեծ տօնախմբութիւններ կը կազմակերպէին: Ղզլարի Յայերը Կանաչ Կիրակի օրը ձուերը կը ներկէին կանաչ գոյնով:

Մինչեւ այժմ Առինջ գիւղի Գետարգել կոչուող վանքին մէջ, Կանաչ Կիրակիին ուխտաւորներու մեծ բազմութիւն կը հաւաքուի, մատաղներ կ'ըլլան, լարախաղացներ, նուագածուներ կու գան եւ մինչեւ ուշ երեկոյ կը պարեն ու կը զուարճանան:


Կանաչ Կիրակին 1999 թուականէն ի վեր երջանկայիշատակ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Յայոց կաթողիկոսի տնօրինութեամբ, հռչակուած է Նորավանքի Ուխտի Օր:



Holidays

Sunday of the World Church (Green Sunday)

The second Sunday following the Glorious Resurrection of Our Lord Jesus Christ is the Sunday of the World Church. It commemorates the first Church of Jerusalem, established by Christ. On the first day of the Jewish festival of Passover, Jesus instructs two



of the Apostles, Peter and John, to go into Jerusalem and meet a man, who would direct them to a house where Christ and His Apostles could celebrate the Passover Feast. Peter and John are led to the “Upper Room” of a house, where they make the necessary preparations for the meal. Later that evening Christ and the Twelve Apostles sit together to eat supper. Christ speaks to them and says, “I have desired to eat this Passover with you before I suffer: For I say unto you, I will not any more eat thereof, until it be fulfilled in the Kingdom of God. And He took the cup, and gave thanks, and said, "Take this, and divide it among yourselves: For I say unto you, I will not drink of the fruit of the vine, until the kingdom of God shall come.” And he took bread, and gave thanks, and broke it, and gave unto them, saying, “This is my body which is given for you: this do in remembrance of me.” Likewise, also the cup after supper, saying, “This cup is the new testament in my blood, which is shed for you.” (Lk 22:15-20) This “Last Supper” was the event where Jesus Christ established the Sacrament of Holy Communion, which we celebrate every Sunday during the Divine Liturgy in Armenian Churches throughout the world. The Upper Room in Jerusalem is considered to be the first Church, as founded by

Christ. The Sunday of the World Church is also called “Green” Sunday, which is the popular name of the feast and is linked with the awakening of nature in the springtime.




Օրուան Խորհուրդը

Քրիստոնեային հոգեւոր կերպարը Քրիստոսի կերպարն է՝ սիրող, համբերատար, ներողամիտ, ողորմած: Եւ կարևոր է գիտնալ, որ ճշմարիտ համբերատարութիւնը, ներողամտութիւնն ու ողորմածութիւնը անհնար են առանց սիրոյ:

Եկեք մենք ալ նմանի՛նք Աստուծոյ սուրբերուն եւ կամովին խոստովանի՛նք մեզ դառնացնող մեղքերը, մեր սրտէն հանե՛նք, ներե՛նք մեր եղբայրներուն յանցանքները: Վարդան Այգեկցի

Միայն հաւատք ու յոյս ունեցի՛ր անձիդ մէջ, դ՛րս եկուր մեղքերէն եւ թողէ անոնք եւ ստոյգ կերպով հաւատայ՛, որ Աստուած կարող է քեզ ապրեցնել: Վարդան Այգեկցի

Մեղքը պատճառ է անպատուութեան, իսկ այն կը ծնի անբանութենէն: Եթէ պարապութիւնը բարիք ըլլար, ապա հողը ամէն բան կու տար առանց ցանելու եւ մշակելու, բայց ան չ'ըներ նման բան մը: Յովհան Ռսկեբերան





**ՈԼՉադրութիւն մեր սիրելի
հաւատացեալներուն,**

**Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի
կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէք ձեր նոր տուեալները
փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066, մեր
հաղորդակցութիւնները կարենալ պահելու համար
կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:
Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:**

Ճիական Խորհուրդ



**Attention to our beloved parishioners,
If you have changes in your address, e-mail or phone numbers
please feel free to convey your new data to the Church office at
(514) 279-3066, to maintain our communication in a regular,
continuous, and up-to-date course.
Thank you for your cooperation.**

Parish Council

ՆՈՒՐԱՏՈՒՌՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

***Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal
Donations of March/April 2018
have been received with great appreciation***



CHURCH:

Manoir Gouin Seniors \$120

ELEVATOR FUND:

Mr. & Mrs. Aret Tasciyan \$100

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE TAKUHI SIRINYAN

Mrs. Deborrah Leckman, Anna & Garen Ortaaslan \$100

THE LATE ANI HASER KERESTECIYAN

Mr. & Mrs. Garo & Talin Masrof (Boston) \$50

HOKEHANKISD:

THE LATE KEVORK BULUR

Serag, Sayat & Leda Bulur, Mr. & Mrs. Yetvart Paylan \$200, Mrs. Vilma Bulur \$150, Mr. & Mrs. Oskan & Tanya Hazarabedian \$100, Mrs. Sona Hazarabedian \$60, Mr. Hampartzoum Papazian, Mrs. Sonia Tabakian, Mrs. Anahid Aprikian, Mr. Garen Bulur \$50

THE LATE ANTRANIK & VERON DJIHANIAN

**Mr. & Mrs. Avedis & Arshaluys Djihanian, Me Hrair Djihanian \$100,
Dr. & Mrs. Arto Demirjian, Dr.& Mrs. Archavir & Nadia Gundjian \$50,
Mr. & Mrs. Mihran & Sonia Djihanian \$35, Dr. & Mrs. Hrair Derkevorkian \$30**

THE LATE ONNIK GASPARYAN

Mr. & Mrs. Peter & Emma Ghougassian \$50

THE LATE ANI BARONIAN

Mrs. Nora Baronian \$100, Mrs. Sonia Baronian \$25

THE LATE VATCHE ARSLANIAN

Mrs. Sylvia Arslanian \$50

YOUGHAKIN EASTER:

**Mr. & Mrs. Murat & Anahit Demirdogen \$100, Mr. Yaghoob Asatoorian, Mr. &
Mrs. Hratch & Salpie Nerdjivanian, Mrs. Bercuhi Sozkes, Mr. Boghos Sahaguian,
Mr. & Mrs. Manuk & Sella Ortainceyan \$50, Mr. & Mrs. Natan & Dita
Menendyan, Mr. Jirayr Gazeryan \$40, Mrs. Hermine Gorlon \$25**





Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդարանիստ Եկեղեցւոյ 2018 Տարեշրջանի Տօնացոյց

Ամիս	Օր	Չեռնարկ
Ապրիլ	24, Երեքշաբթի	<p style="text-align: center;">Մեծ Եղեռնի Յիշատակի Օր</p> <p style="text-align: center;">Ս. Պատարագ եւ Սրբոց Նահատակաց Յիշատակութիւն երեկոյեան ժամը 7:30-ին</p> <p style="text-align: center;">Աւարտին հիւրասիրութիւն «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ</p>
	28, Շաբաթ	<p style="text-align: center;">Mini Bazaar</p> <p style="text-align: center;">Վաչէ Յովսէփեան սրահին մէջ</p>
Մայիս	10, Հինգշաբթի	<p style="text-align: center;">Համբարձման Տօն</p> <p style="text-align: center;">«Մարի Մանուկեան»</p> <p style="text-align: center;">Ճաշկերոյթ եւ վիճակ</p>
	13, Կիրակի	<p style="text-align: center;">Մայրերու Օր</p>
	25, 26, 27 Ուրբ., Շբթ., Կիր.	<p style="text-align: center;">35-րդ Պատգամաւորական Ժողով</p> <p style="text-align: center;">Ս. Վարդան Եկեղեցւոյ մէջ</p> <p style="text-align: center;">Վանքովքը</p>
Յունիս	3, Կիրակի	<p style="text-align: center;">Տօն Կաթողիկէ Ս. Էջմիածնի</p> <p style="text-align: center;">Ս. Գրիգոր Լուսավորչի Ելն ի Կիրապէս</p> <p style="text-align: center;">Եկեղեցւոյ Անուանակոչութիւն</p> <p style="text-align: center;">Մատաղօրհնէք</p>

Յուլիս	8, Կիրակի	«Պայծառակերպութիւն» Խաչալուայ Ջրօրհնէք Վարդավառ
	9, Երկուշաբթի	Մեռելոց Հոգեհանգիստ
Օգոստոս	12, Կիրակի	Տօն «Վերափոխում» Ս. Աստուածածնի Խ աղոթօրհնէք – (ճաշկերոյթ) Ս. Մանուկեան
Սեպտեմբեր	9, Կիրակի	Ս. Խաչվերաց Մատաղ Վաչէ Յովսէփեան սրահ
	21, Ուրբաթ	Հայաստանի Հանրապետութեան 25-րդ Տարեդարձ
Հոկտեմբեր	27, 28 Շաբաթ, Կիրակի	Տարեկան Պազար «Մարի Մանուկեան» սրահ
Նոյեմբեր	Թուականը յաջորդիւ	«Կոմիտաս» Դպրաց Դասի 60- րդ Տարեդարձ
Դեկտեմբեր	2, Կիրակի	Մանուկներու Ս. Ծնունդ եւ Կաղանդի Խ թախճանք CFFA

		«Մարի Մանուկեան» սրահ
	31, Երկուշաբթի	ՆՈՐ ՏԱՐԻ



Յայտարարուիլն

Միբելի հաւատացեալներ կը փափաքինք տեղեկացնել ձեզ թէ յետայսու Ծիական Խորհուրդի ժողովներուն իւրաքանչիւր ամսուայ առաջին Երեքշաբթի օրը, երեկոյեան ժամը 5-5:30, կէս ժամ տեւողութեամբ, Ծիական Խորհուրդը մեր հաւատացեալներուն պիտի յատկացնէ առիթը խորհրդակցական հանդիպում մը ունենալու Ծիական Խորհուրդին հետ:

Այն հաւատացեալները որոնք ունին Եկեղեցւոյ նկատմամբ հարցեր, մեկնաբանութիւններ կամ ենթադրութիւններ կրնան ներկայացնել այդ հանդիպման ընթացքին:

Ժամադրութեան համար հեռաձայնել Եկեղեցւոյ քարտուղարութեան՝

(514) 279-3066

Շնորհակալութեամբ՝
Ծիական Խորհուրդ
Ս. Գր. Լուս. Առաջ. Մայր Եկեղեցւոյ



ԶՕՆՔ

Հանդիսաւոր բացում

**Անահիտ Էվրենսէլ
Էջմիածնայ Կրօնասէր Մայրերու
Աշխատանոցին**

Զօնուած՝

«Էջմիածնայ Կրօնասէր Մայրերու Յանձնախումբ»-ի
Հաւատարիմ եւ Վաստակաշատ Անդամուհի՝

ԱՆԱՅԻՏ ԷՎՐԵՆՍԷԼԻ

Անթառամ յիշատակին

Հանդիսաւոր բացման արարողութիւնը տեղի պիտի ունենայ

Կիրակի, 15 Ապրիլ 2018-ի

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ մէջ

Ս. Պատարագի աւարտին:

Սիրով կը հրաւիրենք մեր հաւատացեալները եւ հանգուցեալին հարազատները
ներկայ գտնուելու վերոնշեալ բացման հանդիսութեան:

Ծիսական Խորհուրդ

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 15 Ապրիլ 2018



Առաջնորդ Սրբազան Զոր, Ծխական Խորհուրդի եւ Յարակից Մարմիններու
խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
Էջմիածնայ Կրօնասէր Մայրերու Յանձնախումբի
մեզմէ անդարց անդամուհիներու յիշատակին՝

ԱՆԱՅԻՏ ԷՎՐԵՆՍԵԼԻ
(ANAHID EVRENSEL)

ՉԱՐՈՒՅԻ ԶԱՐՄԱՆՏԱՐԵԱՆԻ
(ZARUHI HARMANDARIAN)

ՀԱՅԿԱՆՈՅՇ ՓԱՆՈՍԵԱՆԻ
(HAYGANUS PANOSYAN)

ՄԱՏԼԵՆ ՄՇԽՃԱԴԱՔԵԱՆԻ
(MADELEINE MEKHGEAVAKIAN)

ՄԵԼԻՆԷ ՇԻՐԻՆԵԱՆԻ
(MELINE SIRINYAN)

ՇՈՒՇԱՇ ԱՍԼԱՆԵԱՆԻ
(SHUSHAN ASLANIAN)

ՄԵՐՍԵՏԵՍ ՍԱՐԱՖԵԱՆԻ
(MERCEDES SARAFIAN)

ՀԱՅԿՈՒՅԻ ԿՈՒՏՍՈՒՉԵԱՆԻ
(HAYGUHI GUDSUZIAN)

ԱՆՆԻԿ ԱԴԱՄԵԱՆԻ
(ANNIK ATAMIAN)

ԱՐՓԻՆԷ ՏԱՆԱՇԵԱՆԻ
(ARPINE DANACIYAN)

ՎԻԹՅՕՐԻԱ ՕԳՆԱՅԵԱՆԻ
(VICTORIA OKNAYAN)

ՄԱՐԻ ԳԱՎՈՒՔՃԵԱՆԻ
(MARIE KAVOUKJIAN)
ՀԱՅԿՈՒՅԻ ԳԱԶԱԶԵԱՆԻ
(HAYGUHI KAZAZIAN)
ՔԵՐԿՐՈՒՅԻ ԶԵՕՍԼԵՔՃԻՕՂԼՈՒԻ
(PERGRUHI COMLEKCIOGLU)
ԳՈՅԱՐ ԹԵՐԶԵԱՆԻ
(KOHAR TERZIYAN)
ՍԻՐԱՆ ՍԻՄԻԹԵԱՆԻ
(SIRAN SIMITIAN)
ԵՒ
ՎՐԷԺ ԴԱՌՊԱՍԵԱՆԻ
(VREJ DARBASYAN)
Հոգիներուն ի հանգիստ



Տիկ. Արուսեակ Կիրևակիլի,
Տիկ. Սիրուհի Մկրտիչեանի,
Տ. եւ Տիկ. Նորայր եւ Փայլին Կիրևակիլի,
Տ. եւ Տիկ. Ժիլպեր եւ Ռինա Մկրտիչեանի,
Եւ Թոռներուն՝ Մարթեն Կիրևակիլի, Մելիսա Կիրևակիլի,
Ալեք Մկրտիչեանի եւ Մարգ Մկրտիչեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ մեծ մեծ հօր՝

ԼԵՒՈՆ ԿԻՒՐՆԱԿԻԼԻ
(LEVON GURNAGUL)

Մահուան 40-ին առիթով

(Սուրճի սպասարկութիւն «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ)



Տիար Ժիրայր Տեղաբանի,
Տ. եւ Տիկ. Սթիվըն եւ Վիվիան Իպիշեանի եւ զակին,
Տ. եւ Տիկ. Ճերի եւ Թալին Տեղաբանի եւ զաւակներուն,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ կնոջ, մօր եւ մեծ մօր՝

ՔՆԱՐ

ԻՄԱՄԵՃԵԱՆ ՏԵՕՎԼԵԹԵԱՆԻ

(KNAR IMAMEDJIAN DEVLETIAN)

Մահուան առաջին տարելիցին առիթով





**Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Առաջնորդանիստ Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian
Cathedral**

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6-12 տարեկան երեխաներու համար

SUNDAY SCHOOL

For the ages of 6-12 years old children

Կիրակնօրեայ Վարժարանին նպատակն է Աստուծոյ խօսքն ու մեր Եկեղեցւոյ
աւանդոյթները մեր երեխաներուն մտքերուն եւ հոգիներուն մէջ սերմանել:

Երեխաները հաճելի եւ ընկերային մթնոլորտի մէջ կը սորվին Սաղմոսներ եւ
երգեր, կը զարգացնեն Հայերէն լեզուն եւ կը ծանօթանան Հայոց
Պատմութեան:

Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ
Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար հեռաձայնել՝
Եկեղեցւոյ գրասենեակ (514) 279-3066



**Sunday School aims to sow the word of God and
the traditions of our Armenian Church in our
children's minds and souls.**

**In a pleasant and friendly atmosphere, the
children will learn Psalms & songs, develop
Armenian language skills, & introduce to
Armenian history.**

Fun & fascinating consecutive Fieldtrips

**For more information and registration call to the
Church office (514) 279-3066**

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax:
(514) 279-8008

E-Mail: stgregorychurch@gmail.com, www.saintgregory.ca
Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Lancement du Groupe Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont



Nous vous invitons à vous joindre à notre nouvelle Chorale d'Enfants « Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont » (âge d'inscription 7 à 15 ans).



Les pratiques débuteront dimanche le 14 janvier 2018, à l'Église St-Grégoire l'Illuminateur, situé au 615 Av. Stuart à Outremont et auront lieu de 13h00 à 14h00. Elles se poursuivront par la suite tous les dimanches selon ce même horaire.

Les cours seront donnés par le professeur Karen Manucharyan diplômé du Conservatoire de Yerevan, en Arménie, qui assumera la direction de cette chorale.

Les enfants auront l'opportunité d'apprendre les bases de la notation musicale et le solfège

Le répertoire étudié consistera de pièces musicales contemporaines, classiques et religieuses, de langue française et arménienne.

La participation est gratuite. Venez nombreux participer à cette expérience enrichissante!

**Pour des informations additionnelles,
svp vous adresser au
(514) 279-3066 ou à stgregorychurch@gmail.com**

Conseil paroissial



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մանկական Երաժշտական Խումբ



Ձեզ կը հրաւիրենք միանալու մեր նոր մանկական երգչախումբին «Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont» - (գրանցման տարիք 7-15 տարեկան):



Փորձերը կը սկսին Կիրակի, 14 Յունուար 2018, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, կ.ե. ժամը 1:00 2:00 - հասցէ 615 Stuart Avenue Outremont-ի մէջ:

Փորձերը պիտի շարունակուին կատարուիլ ամէն Կիրակի, վերոյիշեալ նոյն ժամուին:

Դասընթացքները պիտի կատարէ Երեւանի երաժշտանոցէն շրջանաւարտ, Կարէն Մանուչարեան, որ կը ստանձնէ նաեւ՝ երգչախումբին ղեկավարութիւնը:

Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու հիմնական երաժշտութեան նորթները, եւ միաժամանակ մշակելով անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:

Ուսումնասիրուած ծրագիրը պիտի բաղկանայ ժամանակակից, դասական եւ կրօնական երաժշտական կտորներէ, Ֆրանսերէն եւ Ղայերէն լեզուներով:

Մասնակցութիւնը անվճար է: Եկէ՛ք եւ օգտուեցէք այս պատեհ առիթէն:

Յաւելեալ տեղեկութիւններու համար հաճեցէք հեռաձայնել (514)279-3066 կամ stgregorychurch@gmail.com

Ծիական Խորհուրդ



**ՈԳԵԿՈՉՈՒՄ
ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ՆԱՅԱՏԱԿՆԵՐՈՒ
103-ԱՄԵԱՅ ՅԻՇԱՏԱԿԻՆ**



**Ս. Պատարագ
ԵՆ
Սրբոց Նահատակաց
Յիշատակութիւն**

Երեքշաբթի, 24 Ապրիլ 2018 երեկոյեան ժամը 7:30-ին

**Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ
Մայր Եկեղեցւոյ մէջ:**

**Պատարագիչ՝
Արժանապատիւ
Տ. Հայ Արի Քինյ. Թանաշեան**

**Ս. Պատարագի աւարտին պիտի կատարուի
հիւրասիրութիւն Եկեղեցւոյ
«Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ:**

**Սիրով կը հրաւիրենք մեր հաւատացեալները
ներկայ գտնուելու այս հոգեպարար արարողութեան:**

Ծիական Խորհուրդ

**615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com**

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



la collecte

15^e
ÉDITION

**LA COLLECTIVITÉ
ARMÉNIENNE**

Samedi 21 avril
10h à 17h

globule

CENTRE LAVAL

1600, boul. Le Corbusier, Laval

DONNEZ DU SANG. DONNEZ LA VIE.



ԳԱՐՆԱԿԱՅԻՆ ՎԱՃԱՌՔ SPRING SALE



Շաբաթ եւ Կիրակի
28, 29 Ապրիլ 2018



Տնային Իրեղեններու
եւ
Ուտեստեղէնի
Վաճառք



Առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.ե. ժամը 3
Եկեղեցոյ «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ

Հասոյթը ամբողջութեամբ
պիտի յատկացուի Եկեղեցոյ Շինարարութեան
Հիմնադրամին:

SALE

Saturday & Sunday
April 28 & 29, 2018

Household Items
& Bake Sale

From 10:00 am to 3:00 pm
In the Church Vatche Hovsepian hall

The proceeds will be allocated to the Church
Renovation Fund

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal





Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի



ԽՈԿՈՒՄ ԵՒ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

**ԽՈԿՍԱՆ, ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍՈՒՐԲ ԳՐՔԻ
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆԸ**

Արդեն իսկ տեղի կ'ունենան ամեն

Յինգշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին

**Մոնթրեալի Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Եկեղեցւոյ մէջ:**

**Կը հրաւիրենք մեր հաւատացեալները մասնակցելու այս
հոգեպարար արարողութեան եւ սերտողութեան, որուն ընթացքին
միասնաբար պիտի փորձենք ճանչնալ Սուրբ Գիրքը, Եկեղեցւոյ
հաւատքն ու առաքելութիւնը, մեր դերն ու մասնակցութիւնը
եկեղեցւոյ կեանքին մէջ եւ վերջապէս պատասխան գտնել մեզ
յուզող հարցումներուն ու մտահոգութիւններուն:**


Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին ներկայութիւնը:

Աղօթարար՝

S. Յայարի Բիւյ. Թանաշեան

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Քեպեքի Հայ Համայնքի Միացեալ Մարմին

**Հայաստանի Հանրապետության
եւ Մայիսեան Հերոսամարտերուն
Հարիւրամեակի Տօնակատարումին**

Կիրակի, 13 Մայիս 2018-ին, երեկ. ժամը 6:30-ին

Centre Arménie

(1025 Boulevard Élisabeth, Laval, QC H7W 3J7)

No 352

Հիւրասիրութիւն ձեռնարկի աւարտին

Մուտքի նուէր՝ 20\$

Հասագոյն մաղթանքներով
Տէր եւ Տիկին
Ալպէր եւ Լէյլա Արոյեաններ

**Տոմսակներու համար կարելի է հեռաձայնել
Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514)279-3066**

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ԵՒ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ
ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ՝

ԳԵՐՇ. Տ. ԱՐԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ ԵՒ ԳԵՐՇ. Տ. ԲԱՐԳԷՆ ԱՐԲ. ՉԱՐԵԱՆԻ

COMMEMORATION OF THE CENTENNIAL OF
THE HEROIC BATTLE OF SARDARABAD AND
THE FIRST REPUBLIC OF ARMENIA

WITH BLESSINGS OF
BISHOP ABGAR HOVAKIMYAN AND ARCHBISHOP PAPKEN TCHARIAN

ՕՐՈՒԱՅ ԲԱՆԱԽՕՍ ԱՐԺ. Տ. ԳԱՌԵՆԿ Ա. ԲՀՆՅ ԳՈՅՈՒՆԵԱՆ
ՇՈՂԱԿԱԹ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱԽԵՐԱԳՐԱԿԱՆ ՏԵՄԱՆԻԹԻ
ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԻՐԹԻ ՇՆՈՐՀԱՆԴԷՍ

ՄՈՆԹՐԷԱԼ

Ս. ԳՐԵԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԷ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԵՍ ԵԿԵՂԵՏԻ
10 ՄԱՅԻՍ, ԺԱՄԸ 7:30-ԻՆ

ԹՈՐՈՆՏՕ

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՏԻ
15 ՄԱՅԻՍ, ԺԱՄԸ 7:30-ԻՆ



MONTREAL
ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL
MAY 10 @ 7:30PM

TORONTO
HOLY TRINITY ARMENIAN
APOSTOLIC CHURCH
MAY 15 @ 7:30PM

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա
ՍԵՐ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՒԿՈՍ
HIS HOLINESS KAREKIN I
CATHOLICOS OF THE GREAT HOUSE OF CILICIA

INCLUDING A TALK BY ARCHPRIEST KARNIG KOYOUNIAN,
A DOCUMENTARY MOVIE BY SHOGHAKAT TV,
AND A BOOK PRESENTATION

ՀԱՎԱՏԱ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴ, ՀԱՎԱՏԱ ԲՈ ԱՆՑՅԱԼԻՆ,
ԲՈ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ԲՈ ՀԱՅՐԵՐԻ ԱՍԾՈՒՆ,
ՆՐԱՆՅ ԱՆՍԱՀ ՈՒ ԿԵՆԴԱՆԻ ՀՈԳՈՒՆ,
ԵՒ ԴՈՒ ՉԵՍ ԱՆՈՒԻ:

ՍՈՒՐԲ ՀԱԿՈՒ ՄԾԲԵԱ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՄԱՍՈՒՆԲՆԵՐԸ ԳԱՆԱՏԱՅՈՒՄ
SAINT JACOB OF MTSBIN
HOLY RELICS IN CANADA

ՀԱՆԻՍԱՒՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Պիտի պատարագի և քարոզի
Արժ. Տ. Հրաչ Բինյ. Մուրադեան
Պլովդիպի Հոգևոր Հովիւ (Պուլկարիա)

DIVINE LITURGY

Celebrant and homilist
Rev. Fr. Hrach Muradyan
Parish Priest of St. George
Armenian Apostolic
Church of Plovdiv
Bulgaria

ՄՈՆԹՐԵԱԼ

Ս. Գրիգոր Լուսավորիչ
Հայաստանեայց
Առաքելական
Առաջնորդամիաս եկեղեցի
Յունիս 17, ժամը 10:30-ին

ԹՈՐՈՆՏՈ

Ս. Երրորդութիւն
Հայաստանեայց
Առաքելական եկեղեցի
Յունիս 24, ժամը 10:30-ին



MONTREAL

St. Gregory
the Illuminator
Armenian Cathedral
June 17,
at 10:30am

TORONTO

Holy Trinity
Armenian Apostolic
Church of Toronto
June 24,
at 10:30am

ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԹԵՄ

ARMENIAN DIOCESE
OF CANADA



DIOCÈSE ARMÉNIEN
DU CANADA

WWW.ARMENIANCHURCH.CA





ՌԻՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

ՏՕՆԵՅԷՐ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 100 ԱՄԵԱԿԸ



PILGRIMAGE TO ARMENIA

CELEBRATE THE CENTENNIAL OF
THE BATTLE OF SARDARAPAT

22.05.2018




PÈLERINAGE EN ARMÉNIE

CÉLÉBREZ LE CENTENAIRE DE LA
BATAILLE DE SARDARAPAT

05.06.2018

25.05.2018




Սարդարապատի Հերոսամարտի
100 Ամեակի Կապակցութեամբ
Հայաստանեայց Առաքելական Սուրբ
Եկեղեցոյ Գանատահայոց Թեմը
Օրհնութեամբ

Գանատահայոց Թեմի Առաջնորդ,
Գերշ. Տ. Արգար Եպիսկոպոս Յովակիմեանի՝
կը կազմակերպէ 14 օրեայ Ուխտազնացութիւն
դէպի Մայր Հայաստան:
Մանրամասնութիւններու համար հաճեցէք
հեռաձայնել կամ գրել Առաջնորդարան:





*On the occasion of
the Centennial of the Battle of Sardarapat
the Armenian Diocese of Canada,
with blessings of*

*His Grace Bishop Abgar Hovakimyan, Primate
is organizing a 14-day pilgrimage to Armenia.
For details, please contact the Diocese.*



*À l'occasion du
Centenaire de la Bataille de Sardarapat,
le Diocèse arménien du Canada
organise un pèlerinage de 14 jours en Arménie,
avec bénédictions du
Primat, Sa Grâce Mgr Abgar Hovakimyan.
Pour plus de détails, veuillez contacter le Diocèse.*



FIND AND JOIN

the «Armenian Diocese of Canada» on
Facebook to receive and share
news about the Diocese.



WATCH

a documentary about the 2016 Pilgrimage
to Armenia. Find the «Armenian Diocese
of Canada» Channel on YouTube.



ՌԻՆՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

ՏՕՆԵՅԷ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՐԱՔՏԻ 100 ԱՄԵԱԿԸ

PILGRIMAGE TO ARMENIA

CELEBRATE THE CENTENNIAL OF
THE BATTLE OF SARDARAPAT

22.05.2018



PÈLERINAGE EN ARMÉNIE

CÉLÉBREZ LE CENTENAIRE DE LA
BATAILLE DE SARDARAPAT

05.06.2018

25.05.2018

PROGRAM



ԾՐԱԳԻՐ



PROGRAMME

Tuesday, 22.05.2018	Departure from Canada.
Wednesday, 23.05.2018	Arrival at Zvartnots airport; Transfer to the Hotel; Matenadaran – Manuscript Depository; Lunch; Tsitsernakaberd - Genocide Museum; Yerevan city tour; Overnight in Yerevan.
Thursday, 24.05.2018	Oshakan; Tomb of St. Mesrop Mashtots; Ashtarak; Lunch; Ohanavank Monastery; Saghmosavank Monastery; Dinner; Overnight in Yerevan.
Friday, 25.05.2018	Geghard Monastery; Lunch; Garni Temple; Vernisazh; Overnight in Yerevan.
Saturday, 26.05.2018	Free Day; Overnight in Yerevan.
Sunday, 27.05.2018	Tsaghkadzor; Lunch; Sevan Monastery; Lake Sevan; Old Dilijan; Haghartzin Monastery; Overnight in Yerevan.
Monday, 28.05.2018	Zvartnotz Cathedral Site; St. Hripsimeh Church; Etchmiadzin Mother Cathedral and Museum; Lunch; Visit to Youth Cultural Center; Sardarapat; Overnight in Yerevan.
Tuesday, 29.05.2018	Khor Virap; Lunch; Noravank; Vayk, Goris; Dinner; Overnight in Artsakh.
Wednesday, 30.05.2018	Stepanakert; Gandzasar; Lunch; Shushi; Dinner; Overnight in Artsakh.
Thursday, 31.05.2018	Tatev Monastery; Lunch; Dinner in Yerevan; Overnight in Yerevan.
Friday, 01.06.2018	Free Day; Overnight in Yerevan.
Saturday, 02.06.2018	Megeryan Carpet; Lunch; Komitas Museum; Cultural Program; Armenian Cognac Factory; Overnight in Yerevan.
Sunday, 03.06.2018	Sanahin; Lunch; Haghpat Monastery; Dinner; Overnight in Yerevan.
Monday, 04.06.2018	Free Morning; Farewell Dinner; Overnight in Yerevan.
Tuesday, 05.06.2018	Transfer to the airport; Departure in the evening with the hope to return!

The cost of the program is \$US 1465 (double room) + ticket + travel insurance.

This price includes: 1) Hotel accommodation; 2) Meals as indicated in the above program (alcohol drinks not included); 3) Full comfortable local transportation service and soft drinks during all trips; 4) Transfer to/from tge Airport; 5) Professional guide service and entrance fees to the historical and cultural sites; 6) Insurance of the vehicle and passengers.




ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՐԻ

Միքելի Հասարացեալներ, Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզ, որ յետայսու, ամէն Կիրակի, Ձեր ինքնաշարժները կրնաք կանգնեցնել Bernard փողոցին վրայ գտնուող Ecole Outremont-ի parking-ին մէջ, սկսեալ առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ կ.ե. ժամը 3:00:

CAR'S PARKING

Dear Parishioners, We would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the Ecole Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm.



- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. Go all the way to the "centre d'éducation". The parking space is on your right.